ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ՄԱՐԻ ԻԶՄԻՐԼՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՄԱՆԿԱՏՈՒՆ» ՊՈԱԿ

" CHILDREN'S HOME – AFTER MARIE IZMIRLIAN " STATE NON COMMERCIAL ORGANIZATION OF THE MINISTRY OF LABOUR AND SOCIAL ISSUES OF REPUBLIC OF ARMENIA

« 20 » « դեկտեմբերի » 2024թ. N 224

«Մ. Ա ԿԻՐԱԿՈՍՅԱՆ» ՍՊԸ –Ի ՏՆՕՐԵՆ՝
ՊԱՐՈՆ ԼԵՎՈՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ո Ւ Մ

Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին

Հարգելի՛ պարոն Կիրակոսյան,

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և «Մ. Ա. Կիրակոսյան» ՍՊԸ-ի միջև 02.02.2024թ-ին կնքված «ԱՍՀՆ-ՊՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/6-ԵԽ-13-ՄԻ» ծածկագրով «Մարի Իզմիրլյանի անվան մանկատուն» ՊՈԱԿ-ի կարիքների համար տնտեսական, սանհիգիենիկ և մաքրիչ նյութերի մատակարարման գնման պայմանագիր, որի 1.1 կետի համաձայն վաճառողը պարտավորվում է գնորդին մատակարարել Պայմանագրի անբաժանելի մաս կազմող N1 և N2 հավելվածներով սահմանված Տեխնիկական բնութագիրով և գնմանվ - վճարման ժամանակացույցով նախատեսված ապրանքներ:

«Մ. Ա. Կիրակոսյան» ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված մատակարարման ժամկետները:

ա) Պայմանագրի 2.1.6 կետի համաձայն՝ Գնորդն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի) եթե վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավել:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ «Մ. Ա. Կիրակոսյան» ՍՊԸ-ի կողմից խախտվել է պայմանագրով սահմանված պարտավորությունը՝ գնորդը միակողմանի մասնակի լուծում է պայմանագիրը և այն համարելով լուծված 113630.2 (մեկ հարյուր տասներեք հազար վեց հարյուր երեսուն դրամ, քսան լումա) ՀՀ դրամի չափով՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017թ մայիսի 4-ի N526-Ն որոշմամաբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունները, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանգրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացի տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով կամ պայմանգրով սահմանված ժամկետում չի վճարել հայտի կամ որակավորման ապահովման գումարը:

Այսպիսով «Մ. Ա. Կիրակոսյան» ՍՊԸ-ին տրվում է 5 օրացուցային օր տուժանքով սահմանված պայմանագրի ապահովման 17813.9 /տասնյոթ հազար ութ հարյուր տասներեք դրամ ինսուն լումա/ ՀՀ դրամ և որակավորման ապահովման 26720.85 /քսանվեց հազար յոթ հարյուր քսան դրամ ութսունհինգ լումա/ ՀՀ դրամ գումարները շահառուի 90000800664 հաշվի համարին փոխանցելու նպատակով: Սահնավաված ժամկետում գումարները չվճարելու դեպքում «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա) ենթակետի համաձայն «Մ. Ա. Կիրակոսյան» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակվելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում նեռառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազոր մարմին, իսկ մատակարարի կողմից ներկայացված որակավորման և պայմանգրի ապահովումները կներկայացվի մատակարարի բանկ՝ նշված գումարները գանձելու նպատակով:

ՏՆՕՐԵՆ՝ Տ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

Երևան ✉ 375037 Մ. Յաղուբյան 13 ☎ (010) 20-15-86, 20-65-92, maryizmirlyan.childcarecenter@mlsa.am